

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### Հայաստանի Հանրապետության կառավարության և Մոլդովայի Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Մոլդովայի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,  
գիտակցելով երկու երկրների միջև գոյություն ունեցող հարաբերությունների հետագա զարգացման և ամրապնդման կարևորությունը,  
նպատակ ունենալով զարգացնել և խորացնել համագործակցությունը կրթության և գիտության բնագավառում,  
համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

#### Հոդված 1

Կողմերը համաձայնում են համագործակցել կրթության և գիտության բնագավառում՝ սույն Համաձայնագրին, ինչպես նաև իրենց պետությունների ազգային օրենսդրությանը և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին և սկզբունքներին համապատասխան:

#### Հոդված 2

Կողմերը համաձայնում են իրենց իրավասության շրջանակում նպաստել միջնակարգ, միջին մասնագիտական, բարձրագույն կրթական և գիտահետազոտական հաստատությունների միջև անմիջական հարաբերությունների հաստատմանն ու զարգացմանը:

#### Հոդված 3

Կողմերը խրախուսում են դասավանդող և գիտահետազոտական անձնակազմերի, ուսուցիչների, ուսանողների և աշակերտների փոխանակման ծրագրերի իրականացումը՝ կրթության և հետազոտական բնագավառում իրենց գիտահետազոտական և կրթական հաստատությունների փորձին և ձեռքբերումներին փոխադարձաբար ծանոթանալու նպատակով:

Կողմերը փոխադարձության սկզբունքով յուրաքանչյուր տարի միմյանց կտրամադրեն ուսումնառության լրիվ ժամկետով 2 կրթաթոշակ՝ մագիստրոսական աստիճանի համար:

Փոխանակման ծրագրերի ստույգ ժամկետներն ու պայմանները կկարգավորվեն Կողմերի շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների միջև համապատասխան համաձայնագրերով:

#### **Հոդված 4**

Կողմերը կխրախուսեն համատեղ գիտահետազոտական ծրագրերի և նախագծերի մշակումն ու իրականացումը՝ իրենց համապատասխան հաստատությունների միջև գիտական համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու նպատակով:

#### **Հոդված 5**

Կողմերը կնպաստեն իրենց կրթական հաստատություններում միմյանց պետությունների լեզվի, գրականության, պատմության և մշակույթի ուսումնասիրմանը և դասավանդմանը և հնարավորության սահմաններում կաջակցեն մասնագետների, մեթոդական նյութերի և դասագրքերի փոխանակմանը:

#### **Հոդված 6**

Կողմերն ըստ անհրաժեշտության կկազմակերպեն պատվիրակությունների փոխայցելություններ՝ հարաբերությունների ամրապնդման, աշխատանքային փորձի փոխանակման, համագործակցության զարգացմանն առնչվող հարցերի քննարկման նպատակով, ինչպես նաև կանցկացնեն խորհրդաժողովներ՝ սույն Համաձայնագրի իրականացման նպատակով:

#### **Հոդված 7**

Կողմերը կխրախուսեն սույն Համաձայնագրի իրականացման նպատակով համապատասխան բիզնես նախագծերի մշակումն ու իրագործումը:

#### **Հոդված 8**

Սույն Համաձայնագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար ֆինանսական աջակցությունը կտրամադրվի Կողմերի ֆինանսական հնարավորություններին համապատասխան:

#### **Հոդված 9**

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարել փոփոխություններ առանձին արձանագրությունների տեսքով, որոնք

կկազմեն դրա անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածին համապատասխան:

### Հոդված 10


Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի ավարտի մասին դիվանագիտական ուղիներով Կողմերի՝ միմյանց ուղղված վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ հնգամյա ժամկետներով, եթե Կողմերից մեկը առնվազն վեց ամիս առաջ մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր չի ծանուցում սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդի Համաձայնագրի շրջանակներում ձեռնարկված այն համատեղ աշխատանքների կատարման վրա, որոնք Համաձայնագրի գործողության դադարեցման պահին դեռևս չեն ավարտվել:

Կատարված է Երևան քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 16-ին երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանությունների ժամանակ տարաձայնության դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության  
կառավարության կողմից՝



Մոլդովայի Հանրապետության  
կառավարության կողմից՝

